Հավելված 1

ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ
<<ՀԷԿ>> ՓԲԸ աշխատողների բժշկական ապահովագրության»

**ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾԱԾԿՈՒՅԹ**

**1. Շտապ և անհետաձգելի բուժօգնություն**

1.1. Շտապ բուժօգնության բոլոր տեսակներ,
1.2. Շտապ բժշկական տեղափոխություններ ՀՀ տարածքում՝ մասնագիտացված մեքենաներով և մասնագիտացված բուժանձնակազմի ուղեկցությամբ (բացառապես ցամաքային փոխադրամիջոցներով),
1.3. 24/7 հեռախոսային խորհրդատվություններ ապահովագրական ընկերության բժիշկ մասնագետների կողմից:

**2. Արտահիվանդանոցային (ամբուլատոր) բուժօգնություն**

2.1. Բժիշկ-մասնագետների խորհրդատվություններ,
2.2. Լաբորատոր ախտորոշում,
2.3. Գործիքային ախտորոշում,
2.4. Ամբուլատոր պայմաններում բժշկական միջամտությունների իրականացում,
2.5. Հիվանդանոցային պայմաններ չպահանջող անհետաձգելի թերապևտիկ հիվանդությունների կամ վիրաբուժական հիվանդությունների ոչ վիրահատական բուժում,
2.6. Հիվանդանոցային պայմաններ չպահանջող պլանային կամ անհետաձգելի վիրահատական միջամտություններ,
2.7. Վնասվածքների (կոտրվածքներ, հոդախախտեր, փափուկ հյուսվածքների սալջարդ, վերքեր և այլն) բուժում,
2.8. Այրվածքների, ցրտահարությունների, էլեկտրահարությունների բուժում,
2.9. Ինֆեկցիոն հիվանդությունների բուժում,
2.10. Սուր թունավորումների ամբուլատոր բուժում:

**3. Ներհիվանդանոցային (ստացիոնար) բուժում**

3.1. Անհետաձգելի թերապևտիկ կամ վիրաբուժական հիվանդությունների ոչ վիրահատական բուժում հիվանդանոցային պայմաններում,
3.2. Վիրահատական բուժում,
3.3. Ներհիվանդանոցային բուժման ընթացքում բժշկի նշանակմամբ և գրավոր հիմնավորմամբ իրականացվող լաբորատոր և/կամ գործիքային ախտորոշիչ հետազոտություններ,
3.4. Ինֆեկցիոն հիվանդությունների բուժում,
3.5. Վնասվածքների (կոտրվածքներ, հոդախախտեր, վերքեր, սալջարդեր, պոլիտրավմաներ) բուժում,
3.6. Այրվածքների, ցրտահարությունների, էլեկտրահարությունների բուժում,
3.7. Սուր թունավորումների բուժում,
3.8. Ինտենսիվ թերապիա և ռեանիմացիոն միջոցառումներ պահանջող անհետաձգելի վիճակների բուժում (որոնք չեն ներառվում պետպատվերի շրջանակներում[1]),
3.9. Վնասվածքների վիրահատությունների ժամանակ կիրառվող մետաղական կոնստրուկցիաներ (բացառությամբ էնդոպրոթեզների),
3.10. Ներքին և արտաքին արյունահոսությունների բուժում
3.11. Ստացիոնար պայմաններում նշանակված դեղամիջոցների արժեքի հատուցում,
3.12. Բժշկական պարագաներ՝ ներարկիչներ, ներերակային կաթիլային համակարգ, բինտ, բամբակ (ներհիվանդանոցային):

3.11 և 3.12 կետերում նշված դեպքերում հատուցվում են այն դեղամիջոցների և/կամ այն բժշկական նշանակության պարագաների արժեքները, որոնք չեն տրամադրվում բժշկական հաստատության կողմից, ներառված չեն բուժման արժեքի մեջ և հիմնավորված են բուժհաստատության կողմից տրված տեղեկանքով (կնքված բուժհաստատության կնիքով),

3.13. Հիվանդասենյակի արժեքի հատուցում՝ մինչև 5,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր օրվա համար:

---

[1] Սույն պայմանագրի իմաստով «պետպատվեր» ասելով հասկացվում են այն ծառայությունները, որոնք ներառված են ՀՀ Կառավարության՝ 04"03"2004թ" ընդունված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշման և այդ որոշման փոփոխությունների/լրացումների մեջ:

**4. Ողնաշարաբանություն**

4.1. Ողնաշարի դեգեներատիվ դիստրոֆիկ ախտահարումների արտահայտված նյարդաբանական ախտանիշներ ունեցող սրացումների դեղորայքային բուժում,
4.2. Ողնաշարի դեգեներատիվ դիստրոֆիկ ախտահարումների դեղորայքային բուժմանը հաջորդող ֆիզիոթերապևտիկ միջոցառումներ՝ էլեկտրոֆորեզ, ֆոնոֆորեզ, գերձայնային հաճախականության ալիքներով թերապիա, ամպլիպուլս թերապիա, ուլտրամանուշակագույն ճառագայթում, բուժական մերսում՝ սույն կետում թվարկած բոլոր ծառայությունների մասով համախառն 1 կուրս՝ 5 սեանս պայմանագրի գործողության ընթացքում:

**5. Ակնաբուժություն և օպտիկա**

5.1. Օպտիկական լինզաների, ապակիների և շրջանակների արժեքի փոխհատուցում՝ տեսողության փոփոխության դեպքում (առնվազն 0.5-ով) մինչև 10,000 ՀՀ դրամ:

**6. Հղիություն և ծննդօգնություն**

6.1. Պետական պատվերի շրջանակներից դուրս բնականոն, ախտաբանական հղիության վարման ծախսերի հատուցում (ստացիոնար և/կամ ամբուլատոր դեպքերում),
6.2. Պետական պատվերի շրջանակներից դուրս ծննդալուծման (այդ թվում կեսարյան հատում) ծախսերի հատուցում,
6.3. 6.1 և 6.2 կետերով նշված ծախսերի համար կիրառվում է հատուցման համախառն սահմանաչափ՝ 50,000 ՀՀ դրամի չափով:
6.4. Հղիության և ծննդօգնության դեպքերում հիվանդասենյակի արժեքի հատուցումն իրականացվում է 6.3 կետով սահմանված սահմանաչափի շրջանակներում. 3.13 կետով սահմանված հիվանդասենյակի արժեքի սահմանաչափը նշված դեպքերում կիրառելի չէ:
6.5. Պայմանագրի 6.1 և 6.2 կետերում նշված նույն ապահովագրական պատահարի մասով հատուցման սահմանաչափերը կիրառելի են միայն պատահարի օրվա դրությամբ գործող պայմանագրի շրջանականերում և նոր պայմանագրի դրույթները չեն կարող կիրառվել նախորդ ապահովագրական պատահարների վրա, որոնցով արդեն իսկ կիրառվել են չգործող Պայմանագրի դրույթներ:

**7. Օնկոլոգիա**

7.1. Չարորակ նորագոյացությունների վիրաբուժություն՝ մինչև 500,000 ՀՀ դրամի չափով:

**8. Նեյրովիրաբուժություն**

8.1.Նեյրովիրաբուժական վիրահատություններ՝ բաց եղանակով
8.2. Նեյրովիրաբուժական վիրահատություններ՝ փակ ներանոթային եղանակով
8.3. 8 կետում թվարկված դեպքերը հատուցվում են համախառն 1,000,000 ՀՀ դրամի սահմաններում:

**9. Սրտաբանություն**

9.1. Սրտանոթային վիրաբուժություն (բաց եղանակով),
9.2. Սրտանոթային վիրաբուժություն (փակ՝ ներանոթային եղանակով),
9.3. Անգիոպլաստիկա դեղապատ բալոնով,
9.4. Աորտայի պրոթեզավորում (հատուցվում են բացառապես աորտայի անևրիզմայի շերտազատման անհետաձգելի վիրահատությունները),
9.5. 9.1,9.2, 9.3 և 9.4 կետերի համար գործում է համախառն 1,400,000 ՀՀ դրամ սահմանաչափ,
9.6. 9 կետում և դրա ենթակետերում թվարկված դեպքերը հատուցվում են, եթե դրանք ներառված չեն ՀՀ ԱՆ «Կյանքի Ստենտ» ծրագրում:

**10. Քրոնիկ հիվանդություններ**

10.1. Քրոնիկ հիվանդությունների սրացումների բուժում,
10.2.Սույն Պայմանագրի շրջանակներում ծածկույթի 2, 3, և 8 կետերով կամ դրանց ենթակետերով նախատեսված բոլոր ոչ վիրահատական ծառայությունները հատուցվում են հիվանդությունների սուր կամ սրացումների փուլում,
10.3.Վիրահատական միջամտություններ, որոնք հանգեցնում են հիվանդության կամ վիճակի լիարժեք ապաքինմանը (պլանային վիրահատություններ), առավելագույնը 100,000 ՀՀ դրամ սահմանաչափով:

**11. Տարեկան կանխարգելիչ բուժզննում**

11.1. Տարեկան կանխարգելիչ բուժզննումն իրականացվում է Պայմանագրի գործողության ընթացքում մեկ անգամ հետևյալ ծավալով.

**Բժիշկ-մասնագետների խորհրդատվություններ՝**

- ✓ Թերապևտ (մանկաբույժ)
- ✓ Ակնաբույժ (ներառյալ տեսողության սրության որոշում)
- ✓ Գինեկոլոգ/ուրոլոգ
- ✓ Քիթ-կոկորդ-ականջ
- ✓ Էնդոկրինոլոգ

**Լաբորատոր հետազոտություններ՝**

- ✓ Արյան ընդհանուր քննություն լեյկոբանաձևով
- ✓ Մեզի ընդհանուր քննություն
- ✓ Շաքարի որոշումն արյան մեջ
- ✓ Լիպիդային պրոֆիլ (ընդհանուր խոլեսթերին, բարձր խտության լիպոպրոտեիդներ, ցածր խտության լիպոպրոտեիդներ, եռգլիցերիդներ)

**Գործիքային հետազոտություններ՝**

- ✓ Էլեկտրասրտագրություն
- ✓ Որովայնի խոռոչի և փոքր կոնքի օրգանների ուլտրաձայնային հետազոտություն
- ✓ Կրծքագեղձի և վահանաձև գեղձի ուլտրաձայնային հետազոտություն:

## ՀԱՏՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

12.1. Հիվանդանոցային բժշկական օգնությունն ու սպասարկումը ներառում են բուժման համար անհրաժեշտ միջոցառումները, այդ թվում՝

12.1.1. բժշկական խորհրդատվություններ,

12.1.2. հիվանդանոցային բուժման ընթացքում իրականացվող բոլոր լաբորատոր-գործիքային հետազոտությունները,

12.1.3. հիվանդանոցային բուժման ընթացքում հիվանդանոցի կողմից անհրաժեշտ դեղերով, բժշկական նշանակության պարագաներով ապահովումը և բուժական միջամտությունները.

12.1.4. պացիենտին հիվանդասենյակով ապահովելը (բացառությամբ պացիենտի կողմից նախընտրած առանձին վճարովի հիվանդասենյակների արժեքի):

12.2. 11.1-րդ կետով սահմանված կանխարգելիչ բժշկական քննությունը կարող է կատարվել պայմանագրի կնքման օրվանից հաշված 365 օրվա ընթացքում միայն մեկ անգամ: Ընդ որում, ապահովագրված անձի նախորդ և հաջորդ կանխարգելիչ բժշկական քննությունների անցկացման միջև ժամկետը չպետք է պակաս լինի 6 ամսից:

12.3. 24/7 գործող Հայտերի սպասարկման կենտրոն (Call Center) և բժիշկ-փորձագետներ,

12.4. Հայտերի ներկայացման, վերահսկման և կարգավորման օնլայն հարթակի առկայություն,

12.5. Համագործակցություն դեղատնային ցանցերի հետ,

12.6. Դեղորայքի առաքման ծառայություն,

12.7. Բուժկենտրոնների ազատ ընտրության հնարավորություն,

12.8. Յուրաքանչյուր կորպորատիվ հաճախորդին կցված անհատական պայմանագրի մենեջեր, բժիշկ-փորձագետ՝ նվազագույնը 10 բժիշկ-փորձագետների առկայություն,

12.9. Խոշոր կորպորատիվ հաճախորդների հետ աշխատելու նշանակալի փորձ, տեղեկությունների փոխանակման և պայմանագրերի սպասարկման հուսալի համակարգեր,

12.10. Յուրաքանչյուր ապահովագրված անձին ապահովագրական ծածկույթի մանրամասներ պարունակող էլեկտրոնային բրոշյուրի տրամադրում,

12.11. Պարբերական հաշվետվությունների ներկայացում, հանդիպումների կազմակերպում ապահովագրված անձանց և Ապահովագրողի բժիշկ-փորձագետի հետ՝ ապահովագրական ծածկույթի ներկայացման և հայտերի հետ կապված խնդիրների պարզաբանման համար:

## 13. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստորև նշված հիվանդությունները, ախտաբանական երևույթները, դրանց հետևանքները և դրանց ախտորոշման և բուժման հետ կապված բոլոր բժշկական ծախսերը ենթակա չեն հատուցման:

13.1. Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով կամ Կանոններով (ինչպես նաև Կանոններին կից հավելվածներով կամ Ծրագրերով), ապա հատուցման ենթակա չեն ստորև թվարկված հիվանդությունները, դեպքերը, բժշկական օգնության տեսակները, հետազոտությունները, վիճակները և այլ ծառայությունները, դրանք և դրանց հետ կապված ցանկացած ծախս (ներառյալ ցանկացած տեսակի լաբորատոր և/կամ գործիքային հետազոտությունները, բժշկական խորհրդատվությունները և դեղորայքային բուժումը), անկախ դրանց ապահովագրական ծածկույթում առանձին ներառված լինելու հանգամանքից.

13.1.1. Առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ, (սիֆիլիս, գոնորեա, խլամիդիոզ, տրիխոմոնիազ, գարդներելոզ, միկոպլազմոզ, ուրեոպլազմոզ, սեռական օրգանների սնկային ախտահարում (կանդիդոզ), ցիտոմեգալովիրուս, անալ, գենիտալ հերպես և այլն),

13.1.2. Տեսողության սրության վիրահատական շտկման ցանկացած մեթոդ, կատարակտա, կերատոկոնուս,

13.1.3. Հիվանդություններ, վիճակներ, որոնք պահանջում են դինամիկ հսկողություն, պահպանողական բուժում (բացառությամբ սույն Ծրագրով հատուցվող դեպքերի),

13.1.4. Օստեոպենիա, օստեոպորոզ, հիպերխոլեսթերինեմիա,

13.1.5. Բնածին արատներ, զարգացման անատոմիական առանձնահատկություններ (ներառյալ՝ քթի միջնապատի դեֆորմացիայի, քթային անցուղիների, հարքթային խոռոչների վիրահատական դեպքերի), գենետիկ, ժառանգական, քրոմոսոմային հիվանդություններ,

13.1.6. Ողնաշարի, միջողնային սկավառակների դեգեներատիվ դիստրոֆիկ ախտահարումներ, միջողնային սկավառակների ճողվածքներ, պրոտրուզիաներ, օստեոխոնդրոզ, սկոլիոզ, կիֆոզ և այլն՝ բացառությամբ Ծրագրով հատուցվող դեպքերի,

13.1.7. Շաքարային դիաբետ (I, II տիպ), դրանց բարդությունները,

13.1.8. Արյան արտաերիկամային մաքրում պահանջող հիվանդություններ կամ վիճակներ, ներառյալ երիկամային անբավարարություն,

13.1.9. Անպտղություն (առաջնային, երկրորդային), սեռական դիսֆունկցիա, հակաբեղմնավորման մեթոդներ, արհեստական բեղմնավորում, հղիության արհեստական ընդհատում (բացառությամբ բժշկական ցուցումներով հղիության արհեստական ընդհատման դեպքերի), սեռական հորմոնային դիսֆունկցիաներ (դիսմենորեա, հորմոնալ ոլորտի այլ շեղումներ), վերարտադրողական ոլորտի շեղումներ,

13.1.10. Թոքերի էմֆիզեմա, պնևմոսկլերոզ, բրոնխոէկտատիկ հիվանդություն,

13.1.11. ՄԻԱՎ վարակ, հեպատիտ B, C, D, E, F, դրանց հետևանքները, բարդությունները, լյարդի ցիրոզ,

13.1.12. Նյարդային համակարգի օբյեկտիվ ախտանիշներ չունեցող խանգարումներ, հոգեկան ոլորտի շեղումներ, սահմանային վիճակներ՝ նևրոզներ, կպչուն վիճակներ և այլն,

13.1.13. Էպիլեպսիա, մանկական ուղեղային պարալիչ, քնի և/կամ շարժողական խանգարումների հայտնաբերումը, կամ ինչպես նաև դրա ցանկացած բուժման մեթոդ

13.1.14. Ծրագրով չնախատեսված ֆիզիոթերապևտիկ միջոցառումներ, ոչ գիտական (ալտերնատիվ) ախտորոշիչ, բուժական մեթոդներ՝ հոմեոպաթիա, ֆիտոթերապիա, արոմաթերապիա, հիդրոթերապիա, ցեխաբուժություն, ակուպունկտուրա, բիոռեզոնանսային ախտորոշում, Ֆոլլի մեթոդով ախտորոշում, իրիդոդիագնոստիկա, մագնիտոթերապիա, էներգետիկ բժշկություն, սկենառ թերապիա, մանուալ թերապիա և այլն; կազդուրման ավանդական համակարգեր; փորձարարական, հետազոտական բնույթի բուժում; հեռաբժշկության հետ կապված ծառայություններ; բուժման էքստրակորպորալ մեթոդներ,

13.1.15. Դեպքերը, վիճակները, որոնց գծով չեն ներկայացվել և/կամ թերի են հատուցում ստանալու համար անհրաժեշտ Կանոններով սահմանված փաստաթղթերը,

13.1.16. Կոսմետիկ վիրաբուժություն, կոսմետոլոգիական ծառայություններ, պլաստիկ, վերականգնողական վիրաբուժություն: Բացառությամբ այն դեպքերի, երբ նման բուժումը, վիրահատությունը պահանջվում է ապահովագրության գործողության ժամկետում տեղի ունեցած վնասվածքի արդյունքում:

13.1.17. Մաշկի, լորձաթաղանթների գոյացություններ՝ խալեր, պոլիպներ, պապիլոմաներ և այլն,

13.1.18. Բժշկական, հարբժշկական սարքավորումներ, սրտի ռիթմը վարող, կարգավորող սարքերի ձեռք բերում, տեղադրում, վերատեղադրում, սրտի ռիթմի խանգարումը բացահայտող, կարգավորող միջոցառումներ (էլեկտրոֆիզիոլոգիական հետազոտություններ, բարձր հաճախականության էլեկտրաաբլյացիա և այլն), կարդիովերտեր-դեֆիբրիլյատորներ: Լսողական սարքեր: Իմպլանտներ, այլ կարգավորիչ բժշկական հարմարանքներ ձեռք բերելու, դրանց հարմարեցման համար կատարված ծախսերը: Պրոթեզներ, էնդոպրոթեզներ, բոլոր տեսակի պրոթեզավորումները, դրանց պատրաստումը, ձեռք բերումը, տեղադրումը, բացառությամբ այն դեպքերի, երբ նման բուժումն անհրաժեշտ է Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած վնասվածքից հետո: Նշված կետից բացառություն են կազմում Ծրագրով նախատեսված դեպքերը,

13.1.19. Պատվաստումներ,

13.1.20. Ապահովագրվածի կողմից բժշկի նշանակումներին չհետևելու, դրանցից հրաժարվելու հետևանքով առաջացած ծախսերը, ինչպես նաև Ապահովագրված անձի ցանկությամբ, առանց բժշկի նշանակման իրականացված ցանկացած բժշկական ծախսերը,

13.1.21. Քաշի կարգավորում, խոսքի արատների շտկում,

13.1.22. Պրոֆիլակտիկ, կազդուրողական միջոցառումներ, իմունոպրոֆիլակտիկա, մարզասարքեր, արևաբուժարան, ջրային պրոցեդուրաներ, սանատոր կուրորտային բուժում և այլն,

13.1.23. Բուժական սնունդ, սննդային, կենսաբանական ակտիվ հավելումներ (վիտամիններ և այլն), խնամքի պարագաներ, հանքային ջրեր, ՀՀ ԱՆ դեղագործական տեսչության կողմից չգրանցված դեղամիջոցներ, խնամքի միջոցներ, բուժական կոսմետիկա,

13.1.24. Պալարախտ, պոլիոմիելիտ,

13.1.25. Ալլերգոդիագնոստիկա, սկարիֆիկացիոն փորձեր,

13.1.26. Պետական պատվերի ծրագրում ընգրկված հիվանդությունների, իրավիճակների բուժում (բացառությունը վերաբերում է բացառապես ստացիոնար դեպքերին),

13.1.27. Մաշկի, եղունգների, փափուկ հյուսվածքների սնկային ախտահարումներ, պսորիազ, էկզեմա,

13.1.28. Բոլոր այն դեպքերը, երբ ստացված բժշկական ծառայություններից հետո Ապահովագրողի պահանջով 10 օրացուցային օրվա ընթացքում Ապահովագրված անձը չի ներկայանում կրկնակի զննության,

13.1.29. Աուտոիմուն, շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդություններ (համակարգային կարմիր գայլախտ, ռևմատոիդ արթրիտ, արթրոզներ, դերմատոմիոզիտ, համակարգային վասկուլիտներ (հանգուցավոր պերիարտերիիտ, հեմոռագիկ վասկուլիտ), ամիլոիդոզ,

13.1.30. Մեքենավարման,զինակրության իրավունքի,սպորտառողջարանային միջոցառումների մասնակցելու,ուսումնական հաստատություն ընդունվելու համար հետազոտությունների անցկացում և տեղեկանքների տրամադրում,

13.1.31. Ատամնաբուժություն,

13.1.32. Ուռուցքաբանություն ՝ բացառությամբ Ծրագրով հատուցվող դեպքերի,

13.1.33. Պայմանագրով չնախատեսված բժշկական, այլ ծառայություններ,

13.1.34. Կատարված բուժումը (այդ թվում՝ դեղորայքային), բուժական միջոցները, հետազոտությունները, որոնք ՀՀ, միջազգային բժշկական ասոցիացիաների արձանագրություններով ճանաչված չեն որպես անհրաժեշտ տվյալ հիվանդության, վնասվածքի, առողջական վիճակի համար: Ապահովագրողն իրավունք ունի մատուցված ծառայության, դեղորայքային բուժման, կատարված, նշանակված հետազոտության անհրաժեշտությունը որոշելու համար հարցում կատարել համապատասխան որակավորում ունեցող մասնագետներին (անհրաժեշտության դեպքում ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր մասնագետներին), հիմք ընդունել նրանց եզրակացությունները,

13.1.35. Ալկոհոլի, թմրանյութերի, թունավոր նյութերի և այլ հոգեմետ նյութերի օգտագործման հետևանքով առաջացած ծախսեր, այդ թվում ՃՏՊ-ներ:

13.2. 13-րդ կետում թվարկված բոլոր բացառությունները ընդհանուր են և կիրառելի բոլոր Ծրագրերի համար, եթե այլ բան նախատեսված չէ Ծրագրում կամ Պայմանագրում:

13.3. Ի լրումն վերոնշյալ բացառությունների՝ յուրաքանչյուր Ծրագրի համար կարող են սահմանվել լրացուցիչ բացառություններ կամ հատուցման մերժման դեպքեր, որոնք նշվում են Կանոնների կամ Պայմանագրի համապատասխան հավելվածներում:

ԲՊԲ վարիչ Վ. Աբրահամյան